Մասնագիտական կրթական ծրագրի ընդհանուր նկարագիր	
Ծրագրի անվանումը	101401.00.7 Առողջարարական ֆիզիկական կուլտուրա (կինեզիոլոգիա)
Ընդհանուր նկարագրությունը	Մագիստրոսը պատրաստվում է խորացված, հիմնարար և մասնագիտական գիտելիքներ պահանջող գործունեության, ինչպես գիտահետազոտական, այնպես էլ մանկավարժական ուղղվածության: Մագիստրոսական կրթական ծրագիրը հնարավորություն է տալիս ընդլայնել ակադեմիական մասնագիտական գիտելիքները, զարգացնել կարողություններ, հմտություններ և ձևավորել մասնագիտական կոմպետենցիաներ՝ ֆիզիկական վերականգնման /ռեաբիլիտացիայի/ բնագավառում: Ուսումնառության տևողությունը 1,5 տարի է՝ 3 կիսամյակ, յուրաքանչյուր կիսամյակ՝ 20 շաբաթ, որից 4 շաբաթ՝ քննությունների համար: Մագիստրանտի ուսումնական լրիվ բեռնվածությունը կազմում է 60 ԵԿՓՀ (ECTS) կրեդիտ: Կրթական ծրագիրը ներառում է ընդհանուր, մասնագիտական, ուսանողի ընտրությամբ դասընթացներ /կամընտրական/, մասնագիտական (կլինիկական) պրակտիկա: Ծրագրի կառուցվածքը ներառում է առարկաների ցանկը, կրեդիտների քանակը և յուրաքանչյուր կիսամյակի համար նախընտրելի ժամանակացույցը: Ծրագրի ուսուցումը մոդուլային է: Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից՝ 1. Ընդհանուր կառուցվածք 2. Մասնագիտական կառուցվածք 3. Առարկաներ ուսանողի ընտրությամբ, 4. Պրակտիկա, 5. Գիտահետազոտական աշխատանք: 6. Ծրագիրը պարտադիր կերպով ավարտվում է մագիստրոսական ատենախոսության հրապարակային պաշտպանությամբ:
Ուսումնական պլանը	https://sportedu.am/wp-content/uploads/2024/08/մագ-կինեզ-հեռակա.pdf
Շնորհվող աստիճանը	Սպորտի մագիստրոս
ՈԱՇ մակարդակը	Որակավորումների ազգային շրջանակի 7-րդ մակարդակ
Կրեդիտները	60
Ուսուցման ձևը	Հեռակա
Ծրագրի տևողությունը	1,5 տարի

Դասավանդման լեզուն	Հայերեն
Ուսման վարձը	600 000 ՀՀ դրամ
Վերջնարդյունքը	Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի. Ա.1 Ներկայացնել ժամանակակից գիտության և կրթության նվաճումներն ու ձեռքբերումները ուսումնական և մասնագիտական խնդիրների վերլուծման համատեքստում: Ա.2 Վերլուծել և համադրել հարակից գիտակարգային գիտելիքներ ինքնակրթության և շարունակական մասնագիտական զարգացման նպատակով: Ա.3 Պարզաբանել ֆիզիկական վերականգնման բնագավառի առաջավոր փորձն ու գիտելիքները: Ա.4 Ձևակերպել ֆիզիկական վերականգնման ոլորտի զարգացման հեռանկարային միտումները: Բ. Մասնագիտական գործնական կարողություններ և հմտություններ Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի. Բ.1 Կարող է կիրառել գիտական հետազոտական մեթոդներ՝ օգտագործելով ժամանակակից սարքավորումներ, մասնակցել ֆիզիկական կուլտուրայի և ֆիզիկական վերականգնման ոլորտում գիտական հետազոտություններին: Բ.2 Մասնագիտական ոլորտում իրականացնել ինքնուրույն և թիմային աշխատանքներ: Բ.3 Ներկայացնել մասնագիտական առաջարկներ՝ համակցելով սեփական ուսումնասիրությունների հիմնախնդիրների հետ: Բ.4 Ինքնուրույն ձեռք բերել նոր մասնագիտական հմտություններ և սեփական կարողություններն ու գիտելիքները գործնականում կիրառել ֆիզիկական վերականգնման ոլորտում: Բ.5 Կիրառել կրթական, մարզաառողջարարական հաստատությունների արդյունավետ կառավարման հմտություններ: Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ և հմտություններ Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի Գ.1 Օտար լեզվով կառուցել բանավոր և գրավոր տրամաբանված խոսք: Գ.2 Հաղորդակցվել, եզրահանգումներ անել և դրսևորել քննադատական մտածողություն: Գ.3 Պահպանել մասնագիտական էթիկայի նորմերը: Գ.4 Պատրաստել զեկույցներ, ներկայացնել գիտահետազոտական աշխատանքների արդյունքները, վարել գիտական բանավեճեր:
Աշխատաշուկան	Կրթական ծրագրի շրջանավարտները հնարավորություն կունենան աշխատելու հետևյալ ոլորտներում՝ • ստացիոնար և ամբուլատոր կլինիկական հաստատություններ, • պետական և մասնավոր վերականգնողական կենտրոններ, • բուժական-կանխարգելիչ հիմնարկներ, • մարզաառողջարարական կազմակերպություններ, • նախակրթական և հանրակրթական հաստատություններ, բարձրագույն ուսումնական հաստատությունների տարբեր ստորաբաժանումներ,

	• նախնական, միջին և բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող մասնագիտական ուսումնական հաստատություններ՝ որպես դասախոս, գիտահետազոտական հաստատություններում՝ գիտաշխատող, • կրթական հաստատությունների համայնքային և պետական կառավարման մարմիններ, • միջազգային գիտական և կրթական կառույցներ: